ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՔԱՎԱՁՈՐԻ

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2023_ 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝

ԷՄԻՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՔԱՎԱՁՈՐ 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագիրը հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթ է: Դպրոցի զարգացման ծրագիրը (այսուհետ ԴԶԾ) կարևոր նշանակություն պետք է ունենա դպրոցի տնօրենի հավակնորդի ընտրության հարցում, քանզի այն արտացոլում է յուրաքանչյուր հավակնորդի՝ տվյալ դպրոցի առնվազն 5 տարվա տեսլականը:

Դպրոցի զարգացման ծրագրի հիման վրա պլանավորվում է աշխատանքը դպրոցում:

ԴԶԾ-ն էապես տարբերվում է դպրոցի ավանդական աշխատանքային պլանից: Եթե դպրոցի աշխատանքային պլանում հիմնականում ուշադրություն է դարձվում դպրոցի ընթացիկ խնդիրների լուծմանը, ապա զարգացման ծրագիրը հանդես է գալիս որպես դպրոցի ռազմավարական պլանավորում, որն ավելի շատ նպատակաուղղված է դեպի ապագան և պետք է ունենա նորարարական ուղղվածություն:

ԴԶԾ- ն մշակելիս ցանկալի է առաջնորդվել հետևյալ փոխկապակցված քայլերի հաջորդականությամբ՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դպրոցի առաքելությունը

1) Ներկայացնել դպրոցի այն տեսակի հեռապատկերը, որին ձգտում է հասնել տվյալ հասատությունը:

2)Ինչ կրթական կարիքներ է բավարարելու ծրագրի առաքելությունը և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար:

3) այդ ամենը իրատեսական դարձնելու ուղիները:

2. Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ:

1) Դպրոցի շենքի կառուցվածքը և առկա վիճակը:

2) Հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան, ուժեղ և թույլ կողմերը;

3. Դպրոցի նախորդ տարիների գործունեության վերլուծություն:

1) Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը, ուժեղ և թույլ կողմերը:

2) Գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը, ուժեղ և թույլ կողմերը:

3) Կառավարման և խորհրդակցական մարմինները, ուժեղ և թույլ կողմերը:

4) Աշակերտական և մանկավարժական համակազմերը, ուժեղ և թույլ կողմերը:

5) Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ, ուժեղ և թույլ կողմերը:

6) Ուսումնական միջավայրը, ուժեղ և թույլ կողմերը:

7) Հասանելիության ապահովումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) անձանց համար, ուժեղ և թույլ կողմերը:

8) Կրթության որակն՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների, ուժեղ և թույլ կողմերը:

4. Գործունեության ոլորտների և նրանցում առկա հիմնախնդիրների վերլուծության արդյունքում սահմանել կոնկրետ նպատակներ:

5. Յուրաքանչյուր նպատակի համար սահմանել այն խնդիրները, որոնց լուծման արդյունքում կարելի է հասնել այդ նպատակին:

6. Սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան գործողությունը կատարողները, ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական ծախսերը:

7. Ծրագրի իրականացման ռիսկերը:

8. Ակնկալվող արդյունքները:

9. Ծրագրի գնահատման ցուցանիշները, վերահսկողությունը:

10. Եզրափակում

ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից աշխարհում , գրեթե բոլոր ոլորտներում, փոփոխություններն աննախադեպ արագ և դինամիկ են ընթանում: Շարունակաբար նորացվող, զարգացվող և փոփոխվող գիտելիքը, դրա ստեղծման համար անհրաժեշտ նորարարությունն ու ստեղծագործությունը դառնում են մրցունակության և արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններ՝ թե՛ անհատական, թե՛ ներպետական և թե համաշխարհային մակարդակներում:

Գիտելիքն այսօր այլևս լոկալ բնույթ չի կրում, ցանցերի և հեռահաղորդակցման դարաշրջանում աշխարհի որևէ ծայրում ստեղծված գիտելիքն արագորեն տեղայնացվում է երկրի մեկ այլ անկյունում: Արդիական են դառնում ՏՀՏ- ների միջոցով միմյանց և աշխարհի հետ ցանցավորված անհատների և թիմերի աշխատանքը, որոնք ստեղծագործաբար են մոտենում կյանքի առաջադրած խնդիրներին ու պատրաստ են շարունակաբար սովորելու:

Այս ամենին հասնելու հիմնական ճանապարհը դպրոցական կրթությունն է, որի ձևերն ու բովանդակությունը փոփոխվում են՝ արձագանքելով գիտելիքի փոխանցման և տարածման արագընթաց տեմպերին և պահանջներին:

Հզոր պետության, ամուր ընտանիքի, առողջ հասարակության , բանիմաց , ազգանվեր, համամարդկային արժեքներով օժտված անհատի ձևավորման հիմքը դպրոցն է: Կրթված և ճիշտ դաստիարակված սերունդը լավագույն զենքն է, պետության անվտանգության լավագույն երաշխիքը՝ ցանկացած պայքարում :

1 ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

1.1Գիտակ, կարողունակ, զարգացած և հայրենասեր քաղաքացու ձևավորումը դպրոցի հիմնական առաքելություններից է:

Հետևաբար, մեր դպրոցի առաքելությունն է՝

1. Յուրաքանչյուր սովորողի ապահովել որակյալ կրթությամբ և հիմնարար գիտելիքներով:
2. Կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման, նոր ձևաչափերի իրականացման անհրաժեշտ պայմանների ձևավորում:
3. Հաղորդակցվելու և ինքնուրույն գործունեություն ծավալելու կարողությունների զարգացում:
4. Սովորողներին տրամադրել բազմակողմանի կրթություն, որը հնարավորություն կընձեռի մասնագիտական կողմնորոշման հարցում՝ ուսումը շարունակելու երկրում և երկրից դուրս:
5. Ձևավորել և դաստիարակել անհատ, ով կարժևորի ընկերությունը, ընտանիքը, համայնքը, հայրենիքը, կունենա ազգային մտածողություն և գաղափարախոսության որակներ:
6. Ամրապնդել սովորողի սերը և հարգանքը իր նախնիների ժառանգության և մշակույթի նկատմամբ:
7. Ստեղծել հասանելի պայմաններ բոլոր սովորողների համար՝ անկախ ազգությունից, սոցիալական վիճակից և մտավոր կարողություններից (այդ թվում ԿԱՊԿՈՒ երեխաների):
8. Առանձնահատուկ ուշադրություն դարձնել օժտված, ընդունակ կամ որևէ բնագավառում աչքի ընկած սովորողին, տալ խրախուսում, գնահատել նրա նախասիրությունները, ընդգրկել խմբակներում, որպեսզի խթան հանդիսանա մյուս սովորողների համար:

ՈՒստի առաքելության

նպատակն է ստեղծել միջավայր, որն ազատ է հոգեբանական բռնության դրսևորումներից և այդ առողջ մթնոլորտում կրթել և ձևավորել համամարդկային արժեքներով, բազմակողմանիորեն զարգացած, հայրենասեր, ազգային արժեքներ կրող, գեղեցիկը և բարին գնահատող, կարողունակ և խելացի անհատներ:

1.2Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցի առաքելությունը:

Առողջ բարոյահոգեբանական մթնոլորտում ճիշտ ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավավորել՝ բանիմաց, բազմակողմանիորեն զարգացած, մասնագիտորեն կողմնորոշված, հայրենասեր, ազգային և համամարդկային արժեքներով օժտված քաղաքացի, ձևավորված անհատականություն, ով կգիտակցի իր դերը շրջապատի, հայրենիքի հանդեպ:

1.3Ծրագրի իրականացման համար ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ են մարդկային, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ:

Մարդկային ռեսուրսներ

- կառավարման և խորհրդակցական մարմիններ
- Ուսուցչական և աշակերտական համակազմ

Նյութատեխնիկական բազա

- Ժամանակակից սարքավորումների և համակարգչային տեխնիկայի ձեռք բերում
- Դասապրոցեսում էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառման ընդլայնում

Ֆինանսական ռեսուրսներ

- Պետական բյուջե, Դրամաշնորհներ , Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում

Առաքելությունն իրականացնելու գրավականներն են՝

- Իրենց գործին գիտակ մանկավարժական թիմ. պատրաստ միմյանց աջակցելու, ինքնակրթվելու և կրթելու:
- Մանկավարժական համակազմի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ վերապատրաստումներ, սեմինարներ , կամավոր ատեստավորում և այդ ամենի կիրառումը գործնական աշխատանքում:
- Կրթության կազմակերպման առողջ և շարունակական միջավայրի բարելավում:
- Լրիվ և ամբողջական ներառական կրթության կիրառում:
- Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը և սովորողների մասնակցությունը սոցիալ – մշակութային միջոցառումների, օլիմպիադաների, մրցույթների, արտադասարանական միջոցառումների:
- Նախագծային ուսուցման կիրառում և խմբակների ստեղծում:

2. ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցի հիմանադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության (այսուհետ հիմնադիր):

Դպրոցը հմնադրվել է 1970թ-ին, կոչվել է Կաքավաձորի միջնակարգ դպրոց:

2004թ-ին անվանակոչվել է Արցախյան պատերազմում զոհված Մեսրոպ Մխիթարյանի անունով:

Հաստատության անվանումը << ՀՀ Արագածոտնի մարզի Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոց >>ՊՈԱԿ:

Հաստատության հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Կաքավաձոր 1-ին փողոց 45 /2 :

Հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 03.11. 2017թ:

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր:Կնիքը , ձևաթղթերը և անհատակ այլ միջոցներ ձևավորելիս հայերենին կարող է զուգակցվել անգլերենը և ռուսերենը:Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

ՀՀ Արագածոտնի մարզի <<Կաքավաձորի Մ. Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոց>> ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ

չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնական հաստատություն է:

Դպրոցը կառուցվել է 1970 թվականին, տուֆակերտ քարե շենք է:

Դպրոցի մակերեսը՝ 2020մ ², դպրոցամերձ հողամասի մակերեսը կազմում է 1. 34հա,

Շենքի նախագծային հզորությունը 320 աշակերտ:

Դպրոցում աշխատում է 28 մանկավարժ, որից 2-ը վարչական՝ 1 զինղեկ, 1 ԴԱԿ:

1 սոց. մանկավարժ, 1 հոգեբան, 1 դաստիարակ, 21 ուսուցիչ:Մանկավարժներից 25-ը ունեն բարձրագույն կրթություն, 3-ը՝ միջին մասնագիտական:

Մանկավարժական խորհուրդը կազմված է 28 անդամներից, ուսումնաօժանդակ անձնակազմը՝ 5 աշխատակցից:

Դպրոցի աշակերտների թիվը 2023- 2024 ուստարում 137 է:

Դպրոցն ունի նախակրթարան, որը հիմնադրվել է 2013թ-ին, 2023-2024 ուստարում նախակրթարան է ընդունվել 11 սան: Նախակրթարանը վերանորոգվել է 2013թ-ին և ապահովված է համապատասխան գույքով, նյութական բազայով:

Դպրոցն ունի Միացյալ կառավարման խորհուրդ, Մանկավարժական խորհուրդ, Աշակերտական խորհուրդ, Ծնողական խորհուրդ, Հոգաբարձուների խորհուրդ:

Դպրոցը գործում է միահերթ և հնգօրյա աշխատանքային ռեժիմով:

Դպրոցն իրականացնում է տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրեր:Սահմանային թիվը տարրական դպրոցում՝ 39, հիմնական՝ 58, միջնակարգ՝ 40(ընդհանուր՝ 137)աշակերտ:

2.1 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ . ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ

Շենքը երկհարկանի տուֆակերտ քարե կառույց է, կառուցվել և շահագործման է հանձնվել 1970 թ-ին, նախագծային հզորությունը 320 աշակերտի համար: Դպրոցի շենքը գտնվում է բավարար վիճակում: Տանիքը թիթեղյա է: 2020թ-ի օգոստոսին դպրոցի և մնացած օժանդակ մասնաշենքերի կտուրների վրա տեղադրվել են ձնարգելանքներ:Եվրոպատուհանները վերանորոգվում և թարմացվում է

անհրաժեշտության դեպքում:

Մուտքի, առաջին և երկրորդ հարկի բոլոր դասասենյակների դռները եվրոարտադրության են: Դպրոցն ունի պահուստային ելքեր:

Դպրոցում կա 3 սանհանգույց, որից միայն մեկն է վերանորոգված և շահագործման հանձնված, մյուս երկուսը ունեն նորոգման կարիք և չեն գործում:

Դպրոցում այս պահին գործում է 13 դասասենյակ, որից 11-ը ունեն 56մ ², 2-ը՝ 28 մ ²

մակերեսներ:

Բոլոր դասասենյակներն ապահոված են անհրաժեշտ գույքով:

Դպրոցն ունի 1 ուսուցչանոց, 1 ՆԶՊ –ի կաբինետ, 1 զենքի պահպանման սենյակ, 2 վարչական սենյակ, 1 լաբորատորիա, 1 ինֆորմատիկայի կաբինետ, 1 շախմատի սենյակ, 1 գրադարան, 1 մարզադահլիճ, 1 հանդիսությունների դահլիճ, 2 հանդերձարան, 1 ճաշարան:

Դպրոցի առաջին հարկի միջանցքը և դասասենյակները ամբողջովին վերանորոգված են: Երկրորդ հարկում վերանորոգման կարիք ունի միջանցքը, սանհանգույցը և որոշ դասասենյակներ:

ՆԶՊ- ի , զենքի պահպանման, շախմատի և ինֆորմատիկայի սենյակները գտնվում են բարվոք վիճակում, հագեցած են համապատասխան գույքով:

Լաբորատորիան ունի դիդակտիկ նյութերի և սարքավորումների կարիք:

Մարզադահլիճի հատակը վերանորոգված է, առաստաղը և պատերը ունեն վերանորոգման կարիք, կա սպորտգույքի պակաս:

Հանդիսությունների դահլիճը մասամբ վերանորոգման կարիք ունի:

2018թ-ին ՄԱԿ-ի գրասենյակի կողմից ամբողջությամբ վերանորոգվել է ճաշարանը, ապահովվել էլեկտրական սարքավորումներով:Մնացած համապատասխան գույքը տրամադրվել է դպրոցի կողմից: Ճաշարանը տաք սնունդ է տրամադրում նախակրթարանի և 1- 4- րդ դասարանների աշակերտներին:

Գրադարանն ունի վերանորոգման և անհրաժեշտ գույքի կարիք:

Դպրոցի ջեռուցումը էլեկտրական է, ջեռուցվում է մասնակի: Չեն ջեռուցվում 1- 2-րդ հարկի միջանցքները, մարզադահլիճը, հանդերձարանները, գրադարանը և հանդիսությունների դահլիճը:

2020թ-ին դպրոց մտնող հոսանքը առանձին կետով, 40կվ հզորությամբ, փակ մալուխով, ստորգետնյա անցումով է անցկացվել:

2020թ-ին համայնքի կողմից դպրոցի համար անցկացվել է նոր ջրամատակարարման համակարգ:

Դպրոցն ունի ազդարարման շչակ, հակահրդեհային կրակմարիչներ:

Դպրոցն ունի բակ, ցանկապատված տարածք, դպրոցամերձ հողամաս, պտղատու այգի, գեղեցիկ և խնամված ծաղկանոց, ֆուտբոլի բացօթյա դաշտ:

2014թ-ին բակում տեղադրվել է Մեսրոպ Մխիթարյանի կիսանդրին, ում անունով էլ կոչվում է դպրոցը:

<<ԻՄՓԱՔԹ>> ակումբի երեխաների ջանքերի շնորհիվ բակում տեղադրվել են նստարաններ և աղբամաններ:

2. 2 Դպրոցի շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան

Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին:

Բոլոր դասասենյակները բավարար չափով կահավորված են:

Դպրոցը բավարար չափով ապահովված է նյութատեխնիկական բազայով:

ԴՊՐՈՑԻ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Հանդիսությունների դահլիճ • Մարզադահլիճ • Բացօթյա սպորտհրապարակ • Դպրոցամերձ այգի • Ցանկապատված հողատարածք • Համակարգչային դասասենյակ • Ճաշարան • Ստորգետնյա առանձին հոսանքի գիծ • Ազդարարման համակարգ • Տանիքում տեղադրված ձնարգելանքներ • Պահուստային ելքեր • ՆԶՊ – ի և զենքի պահպանման սենյակ, որն ունի մետաղյա ճաղավանդակ և ապահովված է լուսային,ձայնայինազդանշա-նային համակարգով • Ընդարձակ և լուսավոր դասասենյակներ	• Ապաստարանի բացակայություն • Վերանորոգման և գույքի կարիք ունեցող դասասենյակներ, լաբորատորիաներ • Շենքը հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ սովորողների անվտանգ տեղաշարժի համար • Լաբորատորիայի նյութատեխնիկական բազայի բացակայություն • Սանհանգույցի պակաս

3. Դպրոցի նախորդ տարիների գործունեության վերլուծություն

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը: Բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմնախնդիրները:

Իրավիճակի վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատակահարմար է այն կատարել ըստ ոլորտների:

ոլորտ	Իրականացված աշխատանք

դպրոցի շենքային պայմանները	• Փոխվել են մուտքի և դասասենյակների դռները • Ամբողջությամբ վերանորոգվել է առաջին հարկը(դասասենյակները, միջանցքը, սանհանգույցը) • Դասասենյակների համար ձեռք է բերվել որոշակի գույք • <<Տաք սնունդ>> ծրագրի շրջանակում հիմնվել և վերանորոգվել է ճաշարանը: • Հիմնվել է դպրոցամերձ պտղատու այգի • Դպրոցամերձ հողատարածքը ցանկապատվել է • Տանիքում տեղադրվել են ձնարգելանքներ • Անցկացվել է առանձին հոսանքի գիծ • Ջրամատակարարման նոր ցանց է անցկացվել
Նյութատեխնիկական բազա	Վերջին տարիներին դպրոցը ձեռք է բերել • 6 համակարգիչ • 1 պրոյեկտոր • 4 բազմաֆունկցիոնալ տպիչ • 1 3D տպիչ • 1 ռոբոտ
Մանկավարժական համակազմի ձեռքբերումները	• Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն, բացի 3-ից: Ուսուցիչների մեծամասնությունը, համաձայն կարգի, մասնակցել են համապատասխան վերապատրաստումների և ատեստավորված են: • 1 ուսուցիչ ունի առաջին տարրակարգ • Ուսուցիչներից մեկն արժանացել է <<Տարվա լավագույն ուսուցիչ>> մրցանակին: • Մեկ ուսուցիչ հաղթահարել է կամավոր ատեստավորման շեմը, իսկ 5-ը նախապատրաստվում են մասնակցելու:

Աջակցություն մանկավարժներին	• Մեթոդական ուղեցույցների տրամադրում • Էլեկտրոնային հարթակներից օգտվելու հնարավորություն • ՏՀՏ կարողությունների և հմտությունների զարգացում • Սեմինարների, վեբինարների, վերապատրաստումների մասնակցություն • Դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակում
Խորհրդակցական մարմիններ	• Դպրոցում ակտիվ գործում են միացյալ, մանկավարժական, ծնողական, աշակերտական և հոգեբարձուների խորհուրդները, որոնց գործառույթները ամրագրված են դպրոցի կանոնադրության մեջ: • Բոլոր խորհուրդները սերտ համագործակցում են միմյանց հետ: • Կազմակերպում են ժողովներ, հանդես են գալիս առաջարկություններով և նախաձեռնություններով, կայացնում են որոշումներ: • ԱԽ- ի կողմից կազմակերպվում են միջոցառումներ, շաբաթօրյակներ: • ԾԽ-ի կողմից որոշում է կայացվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագիքերի գումարը զեղչել: • ԾԽ-ի կողմից կատարվում է վերահսկողություն և աջակցությու<< Տաք սնունդ >> ծրագրի շրջանակներում : • Կազմակերպվել են ճանաչողական էքսկուրսիաներ
Դպրոցի մշակութային և ուսումնադաստիարակչական գործունեություն	Դպրոցում կազմակերպվում են բազմաթիվ արտադասարանական, արտադպրոցական, մշակութային, ուսումնադաստիարակչական և թեմատիկ բնույթի միջոցառումներ՝ տոներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, հիշատակի և խոնարհման միջոցառումներ: Հ. Լեզվի ուսուցիչների կողմից կազմակերպվում են <<Փրկենք բարբառը >> խորագրով միջոցառումներ և նախագծային աշխատանքներ

Մասնակցություն մարզային և հանրապետական մրցույթների և մրցաշարերի	• Սովորողներն ակտիվ մասնակցություն են ցուցաբերել <<ԱՅԲ>> հիմնադրամի կողմից կազմակերպված <<Կենգուրու>>, <<Մեղու >>մրցույթներին, արժանացել հատուկ և լավագույն մրցանակների: • Մասնակցել են նաև առարկայական օլիմպիադաներին: • 2021թվականից Կաքաքաձորի Մ.Մխիթարյանի անվան միջնակարգ դպրոցում գործում է 6- 13 տարեկան《Կաքավաձորի աղջիկներ》ֆուտբոլային ակումբը, որը նաև մասն է կազմում《Ախթամար》աղջիկների ֆուտբոլի ակադեմիայի: Թիմը այս տարիների ընթացքում հանդես է եկել ԿՄ10, ԿՄ12, իսկ այս տարի հանդես կգա ԿՄ13 մանկապատանեկան առաջնությունում, որը կազմակերպում է ՀՖՖ: Դպրոցում ունենք նաև ֆուտբոլիստուհիներ,ովքեր խաղում եմ ՀՖՖ ֆուտբոլի առաջնության առաջին խմբում : Աշակերտները նաև ակտիվ մասնակցում են սպորտլանդիաներին և սպարտակիադաներին լավագույնս ներկայացնում դպրոցը: Ունեն մեդալներ, շնորհակալագրեր, պատվոգրեր և գավաթ:

3.1ԴՊՐՈՑԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի հիմնական ֆինանսավորման աղբյուրը պետական բյուջեն է :
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ և թափանցիկ է:
Դպրոցի բյուջեի ծախսերն ունեն հետևյալ հիմնական ուղղությունները:

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ
- Կոմունալ վճարումներ
- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- Գրասենյակային և տնտեսական ապրանքների ծախսեր

Ֆինանսական հաշվետվությունները և նախահաշիվը տեղադրվում են դպրոցի և մարզպետարանի կայքէջերում:

Ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեկան բյուջեի միջոցները հիմնականում բավարարում են աշխատավարձին և կոմունալ ծախսերին:

Բյուջեի բարեխիղճ կառավարման արդյունքում, դպրոցը ձեռք է բերել գույք և սարքավորումներ:

2023 թ-ի սեպտեմբերից դպրոցի մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխություն է կատարվել՝

1-ին տարրակարգ- 114400 դրամի փոխարեն՝ 119.800դրամ

2-րդ տարրակարգ- 116600 դրամի փոխարեն՝ 120.000 դրամ

3-րդ տարրակարգ- 118800 դրամի փոխարեն՝ 120.200 դրամ

Նոր կարգի համաձայն դպրոցի բյուջեի ֆինանսավորումը կատարվում է դասարանների թվով պայմանավորված:

2023թ-ի հունվարից ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձը դարձել է 95625 դրամ:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
1. Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն և ժամանակին փոխանցումները: 2. Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը և օգտագործումը:	Պետական բյուջեից դպրոցի զարգացմանն ուղղված ծրագրերի կազմման ֆինանսավորման անբավարար ծավալը:

3.2 ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝ <<Կրթության մասին>>, << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքներով, <<ՀՀ աշխատանքային օրենսգրքով>>, դպրոցի

կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր նորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
1. Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, լրացվում են սահմանված կարգով: 2. ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը համապատասխանեցված են դպրոցի կառուցվացքային առանձնահատկություններին և կանոնակարգվում են կանոնադրության համաձայն: 3. Լիցենզիայի առկայություն կրթական երեք աստիճանում: 4. Նախակրթարանի լիցենզիայի առկայություն:	Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն:

3.3 Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավավորվում են կառավարման և խորհրդակցական մարմիններ՝ կառավարման միացյալ խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, հոգաբարձունների խորհուրդ:

Այս մարմինները սերտորեն համագործակցում են միմյանց հետ, առաջնորդվում են իրենց հստակ կանոնադրությամբ, նրանց գործոնեությունը բաց է և թափանցիկ:

Միացյալ կառավարման խորհուրդը հաստատում է ուսումնական հաստատության կանոնները և քննարկում ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները:

Մանկավարժական խորհուրդը բարեխղճորեն կատարում է իրեն վերապահված գործառույթները, հիմնականում նիստերը կայանում են բոլոր անդամների մասնակցությամբ:

ԱԽ-ն ակտիվ է, ըստ կանոնադրության պարտաճանաչորեն գումարում են նիստերը հստակ օրակարգերով:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ և ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Հոգաբարձուների խորհուրդը նույնպես պատշաճ կերպով կատարում է իր գործառույթները:

Հիմնախնդիրը այստեղ կայանում է նրանում, որ խորհուրդները ունենան իրական ինքնավարություն, ազատ լինեն իրենց գործողություններում՝ պահպանելով իրենց իրավունքներն ու պարտականությունները:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ
1. Հաստատության գործունեության թափանցիկություն: 2. Ծնողական խորհրդի աջակցությունը ուսումնադաստիարակչական աշխատանքներին: 3. Կառավարման միացյալ խորհրդի և խորհրդակցական մարմինների սերտ համագործակցություն, դպրոցամետ գործունեություն՝ իրենց վերապահված գործառույթների շրջանակում:	1. Ծնողների կողմից դասալսումներ չիրականացնել: 2. Ծնողական խորհրդի պասիվ մասնակցությունը ԿԱՊԿՈՒ աշակերտների ինտեգրման գործընթացին: 3. Համագործակցության, նախաձեռնությունների պասիվություն:

3.4 Աշակերտական համակազմը

2023 թվականի սեպտեմբերի դրությամբ՝ դպրոցում սովորում է 137 աշակերտ, որից տարրական 39 աշակերտ, հիմանական 58, միջնակարգ 40: 2023 թվականին ունեցել ենք 20 գերազանցիկ աշակերտ, ունենք ԿԱՊԿՈՒ 2 աշակերտ միջին ծանրության: Հանրակրթությունից դուրս մնացած և տնային ուսուցում իրականացնող աշակերտ չկա:

Դասարանների թիվը	2020-2021 ուսումնական տարի	2021-2022 ուսումնական տարի	2022-2023 ուսումնական տարի	2023-2024 ուսումնական տարի	Փոփոխությունների դինամիկա
1-ին դասարան	8	8	12	11	Աճ
2-րդ դասարան	12	8	7	14	Աճ
3-րդ դասարան	12	11	7	7	Նվազում
4-րդ դասարան	7	11	11	7	Նվազում
5-րդ դասարան	13	7	12	12	Նվազում
6-րդ դասարան	17	13	6	12	Աճ
7-րդ դասարան	14	17	11	7	Նվազում
8-րդ դասարան	13	14	16	11	Նվազում
9-րդ դասարան	13	13	14	16	Աճ
10-րդ դասարան	10	13	13	14	Աճ
11-րդ դասարան	12	10	13	13	Աճ
12-րդ դասարան	10	11	10	13	Աճ
Ընդհանուր	141	136	132	137	Աճ

Սերտ և ամուր է աշակերտ – դպրոց – ուսուցիչ կապը, ինչը փաստում է որ մեր սաները սիրում են դպրոցն ու կրթությունը: Շրջանավարտները միշտ կապի մեջ են դպրոցի, իրենց ուսուցիչների հետ : 2023 թվականին բարձրագույն ուսումնական հաստատության ընդունվողների թիվը 4-ն է:

ՈՒժեղ կողմ	Թույլ կողմ

Գիտելիքների ստուգում, ավարտական քննությունների արդյունքների վերլուծություն Ակտիվ մասնակցությունը ստեղծագործական, արտադասարանական, սպորտային մրցույթներին և միջոցառումներին: ԲՈՒՀ ընդունվողների բարձր ցուցանիշ: Անհարգելի բացակայությունների ցածր ցուցանիշ: Սովորողների թվի աճ	Թույլ կարողությունների տեր աշակերտներ Տղաների շրջանում կրթության նկատմամբ հետաքրքրվածության պակաս: Ռազմական հաստատություններ դիմորդների պակաս: Սովորողների բջջային հեռախոսներից կախվածության բացասական հետևանքներ: Մրցակցային մտածելակերպ:

3.5 Մանկավարժական համակազմը

Դպրոցում աշխատում են բարձրագույն կրթությամբ, փորձառու, հմուտ, բարեխիղճ մանկավարժներ:Գրեթե բոլորն ունեն 5 և ավելի տարվա փորձ:

2020թ-ին, համավարակի պայմաններում, ուսուցիչները հեռավար ուսուցման ժամանակ իրենց կարողությունները բարելավեցին ՏՀՏ դաշտում:

Ուսուցման գործընթացում կիրառում են ժամանակակից մեթոդներ և հնարքներ, ՏՀՏ գործիքներ, որոնք դասն ավելի հետաքրքիր ու արդյունավետ են դարձնում:

Դպրոցում գործում են Հ. Լեզվի, տարրական, ԲՏՃՄ առարկաների մեթոդմիավորումներն՝ ըստ իրենց գործառույթների: Կազմակերպվում են մ/մ նիստեր, բաց դասեր, փոխադարձ դասալսումներ, վիկտորինաներ, միջոցառումներ, փորձի փոխանակում, մեթոդական զեկուցումների ընթերցում և քննարկում:

Բոլոր ուսուցիչները տիրապետում են գնահատման նոր ձևերին ու չափորոշիչներին:

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
• Պատասխանատու և փորձառու մանկավարժներ • Համապատասխան որակավորում և բարձրագույն կրթությամբ կադրեր: • Տարրակարգ ունեցող ուսուցիչ	• Երիտասարդ կադրերի պակաս • Տարեց ուսուցիչների թիվը գերակշիռ մասն է կազմում և մի մասը լավ չեն տիրապետում ՏՀՏ գործիքներին:

• Կամավոր ատեստավորման շեմը հաղթահարած 1 ուսուցիչ • Կամավոր ատեստավորմանը նախապատրաստվող 5 ուսուցիչ • ՀՀ նախագահի կողմից <<Լավագույն ուսուցիչ>> մրցանակին արժանացած1 ուսուցիչ: • Մ/Մ համագործակցված աշխատանք	

Ուսուցիչների թիվն ըստ տարիքային բաշխվածության	2020- 2021թ	2021- 2022թ	2022-2023	2023-2024
ընդհանուր	27	27	27	28
Մինչև 30 տարեկան	3	3	2	2
30- 40 տարեկան	4	4	4	4
41- 50 տարեկան	5	6	6	6
50- 55 տարեկան	6	4	4	4
56 տարեկան և ավելի	9	10	11	12



Համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ:

Համագործակցության, փորձի փոխանակման , քննարկումների արդյունքում է ձևավորվում արդյունավետ աշխատանքն ու վերջնարդյունքը: Կաքավաձորի Մեսրոպ Մխիթարյանի անվան դպրոցը համագործակցում է Արագածոտնի մարզպետարանի, ԿԳՄՄՆ, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, << ԱՅԲ հիմնադրամի>>, ԱԻՆ-ի, ոստիկանության, ամբուլատորիայի,զինկոմիսարիատի, համայնքապետարանի, World Vision կազմակերպության և այլ ուսումնական հաստատությունների հետ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
. Մշտական համագործակցություն համայնքի հետ: . Ակտիվ մասնակցություն մշակութային կյանքին: . Տարհանման պլանների առկայություն (ՔՊ, ԱՌՆ): . Հաճախակի սեմինարներ և հանդիպումներ ԱԻՆ-ի և ոստիկանության աշխատակիցների հետ: . Ստուգումներ համայնքի բուժկետի աշխատակցի կողմից:	. Փոխադարձ համագործակցությունների համար ֆինանսների բացակայություն: . Տարհանման (ՔՊ, ԱՌՆ) պլանների կիրառության ժամանակ համայնքի պասիվ մասնակցություն: . Արվեստագետների և մշակութային գործիչների այցելություն:

Ուսումնական միջավայրը

2023-2028թթ. զարգացման ծրագրում պլանավորված են քայլեր, որոնք ուղղված են բարելավելու և ամբողջացնելու դպրոցի ուսումնական միջավայրը: Ուսումնական միջավայրը հատուկ կազմակերպված հնարավորությունների, գործընթացների և սոցիալական փոխազդեցության համակարգ է, որը տրամադրում է սովորողին ուսուցման և անձնային-մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:

Շատ կարևոր է ունենալ հարմարավետ, հրապուրիչ, խրախուսող ուսումնական միջավայր: Կարևոր է նաև առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, սովորողների առողջության պահպանում, բացակայությունների վերահսկում, սանիտարահիգենիկ կանոնների և միջոցառումների պահպանում: Ուսումնական միջավայրը ճիշտ կանոնակարգելու

գրավականներից է նաև դասասենյակների և առարկայական կաբինետների, դասագրքերի և այլ գրականության, սարքավորումների առկայությունը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
. Ժողովրդական կառավարում . Ստեղծարար մշակույթային և բարոյահոգեբանական ճիշտ մթնոլորտ: . Ներքին կարգապահական կանոնների կիրառում: . Լաբորատորիաների առկայություն: . ՆԶՊ կաբինետի և զենքի պահպանման սենյակի առկայություն: . Բաժանորդային տոմսերով այցեր մշակութային կենտրոններ:	. Կրթական կարիքները բավարարող պայմաններ: . Նյութատեխնիկական բազա: . Սպորտդահլիճի ջեռուցում, մասնակի վերանորոգում և մարզագույքի պակաս: . Արհեստանոցներ և առարկայական կաբինետներ: . Գրադարանի վերանորոգում և նյութատեխնիկական բազա: . Լաբորատոր ժամանակակից սարքավորումների բացակայություն:

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ըստ ՀՀ <<Կրթության մասին>> օրենքի կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը կրթության զարգացման ծրագիրն է, որի գործողությունների շարքում կարևոր մաս են կազմում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները և նրանց պահանջները: ԿԱՊԿՈՒ երեխաների կրթությունը կարգավորվում է <<Կրթության մասին>>, << Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության>>, <<Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության>> օրենքներով:

Ներառական կրթությունը ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարեցնեն նրանց մտավոր, հոգեբանական և ֆիզիկական զարգացման կարիքները և անհատական պահանջները: ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորող իրավունք ունի օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից: ԿԱՊԿՈՒ երեխաների մուտքը հանրակրթական դպրոցներ դեռևս բավարար չէ կրթական համակարգը ներառված համարելու համար: Կան մի շարք խնդիրներ և նպատակներ, որոնց լուծումն ու իրականացումը միայն կարող է ապահովել արդյունավետ ներառում:

Այդ նպատակներն են՝

- հավասար հնարավորությունների ստեղծում յուրաքանչյուր երեխայի համար:
- Ապահովել նրանց զարգացման և իրացման պահանջներին համապատասխան ուսումնական, անհատական, տեխնիկական միջոցներ և սարքավորումներ:
- Մասնագիտական թիմի և նրանց գործառույթների հստակ ամրագրում, ուսուցիչների վերապատրաստման ապահովում:
- Կրթական ծրագրերի, ուսումնական նյութերի համապատասխանեցում, առարկայական դասասենյակների հարմարեցում նրանց պահանջներին:
- Կազմակերպել և իրականացնել սննդի, բժշկական սպասարկման և բուժիչ-կանխարգելիչ միջոցառումներ:
- Կազմակերպել հանդիպումներ ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների և ուսուցիչների
- համար, նրանց տեղեկատվական մակարդակը բարձրացնելու և կայուն համագործակցություն ապահովելու համար:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
. Հոգեբանի առկայություն: . Սոց մանկավարժի առկայություն: . Հաճախակի այցեր և ուսուցիչների վերապատրաստում ՏՄԱԿ-ի կողմից: . Համայնքի բուժքրոջ հաճախակի այցելություն: . Ուսուցիչների և աշակերտների ջերմ և հոգատար վերաբերմունքի շնորհիվ ԿԱՊԿՈՒ երեխաների հարմարվողականությունը միջավայրին: . Հաշմանդամ երեխայի առկայություն, ով չունի մտավոր կարողությունների խնդիր:	.Շենքային պայմանների ոչ բավարար վիճակ (թեքահարթակներ, սանհանգույց, համապատասխան գույք): . Ֆիզկուլտուրայի դասերի և խմբակների մասնակցության բացակայություն: . Հենաշարժողական խնդիր ունեցող հաշմանդամ երեխա: . Խելամիտ հարմարեցումների բացակայություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՆ ԸՍՏ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Հանրակրթության և նախնական մասնագիտական կրթության ոլորտում հիմնական գերակայությունը որակի բարձրացումն է, որի նախապայմանն է ուսումնական հաստատությունների կողմից կրթական առաքելության գիտակցումը:

Կրթության որակը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Դրանցից առաջնահերթը ուսումնասիրության արդյունքներն են, որոնք պահանջված են սովորողների կողմից և ապահովում են շրջանավարտների պատրաստվածությունը՝ ուսումը շարունակելու կրթության հաջորդ մակարդակում:
Դպրոցը լուրջ և արդյունավետ աշխատանք է տանում ուսման որակը բարելավելու համար: 2023թ.-ին ունեցել ենք 20 /քսան/ գերազանցիկ, առարկաների տարեկան, միջին և քննական լավ գնահատականներ: Բուհեր ընդունվել են՝ 2021թ.-ին 4/չորս/ աշակերտ, 2022թ.-ին 5/հինգ/ աշակերտ, 2023թ.-ին 4/չորս/ աշակերտ:
Կրթության որակի բարձրացման գործողությունների շրջանակում կարևոր են հետևյալ հիմնական կետերը.

- կրթական չափորոշիչների և ծրագրերի բարելավում
- հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ապահով և անվտանգ միջավայրի ստեղծում
- բարձր որակավորում և պատրաստվածություն ունեցող մանկավարժական անձնակազմի ապահովում, ովքեր տիրապետում և կիրառում են ժամանակակից դասավանդման մեթոդներ
- կրթական պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավում:

Որակյալ կրթություն ապահովելու համար դպրոցը տանում է հետևյալ աշխատանքները.

- սովորողի դաստիարակություն ազգային բարոյական նորմերով
- պետական չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան թեմատիկ պլաններ, գնահատման նոր ձևերի կիրառում և դրանց վերահսկումը մեթոդ միավորումների, ուսումնական գծով տեղակալի և տնօրենի կողմից:
- հսկողության սահմանում դասավանդման որակի, տնային հանձնարարությունների ծավալի, թեմատիկ գրավորների տրման ժամկետների և բովանդակության գործառույթների կազմակերպման համար
- ԳԹԿ-ի կողմից արտաքին գնահատման անցկացում
- հաճախակի վերապատրաստումների միջոցով ապահովում է ուսուցիչների շարունակական մասնագիտական աճը
- խմբակների և նախագծային աշխատանքների ծրագրերի կազմում,կիրառում և կատարողականի վերահսկում
- ուսումնական ձեռնարկների նյութերի տրամադրում
- գործնական աշխատանքների խելամիտ կազմակերպում, մեթոդական զեկուցումների ընթերցում, փորձի փոխանակում:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄ
. Գնահատման նոր ձևերի կիրառում . Հայտորոշիչ գրավորների անցկացում . Բաց դասերի և փոխադարձ դասալսումների կազմակերպում . Օլիմպիադաների մասնակցություն . Գիտելիքների ստուգման, ավարտական, պետական ավարտական, կենտրոնացված քննությունների արդյունքներ . Ամփոփիչ գնահատման արդյունքներ . Աշակերտների կողմից ՏՀՏ –ների վարժ տիրապետում	.Լրացուցիչ կրթական ծրագրերի բացակայություն . Մասնագիտական կողմնորոշում . Մրցակցության բացակայություն . Ուսուցիչների ոչ բավարար տիրապետումը ՏՀՏ-ներին

5Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակներն ու խնդիրները , ծրագրի իրականացման ռիսկերը

ոլորտը	նպատակը	խնդիրները	ռիսկերը

Դպրոցի շենքային պայմաններն ու նյութատեխնիկական բազան	Իրականացնել մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ (միջանցքների, որոշ դասասենյակների, սանհանգույցի, սպորտդահլիճի, հանդիսությունների դահլիճի, գրադարանի) Թեքահարթակի կառուցում Գույքով և նյութատեխնիկական բազայով ապահովվածություն Բուֆետի շահագործում Ֆոտովոլտային արևային կայանի տեղադրում տանիքում	Դպրոցի շենքային պայմանների բարելավմանն ուղղված կապիտալ ծախսեր Նյութատեխնիկական բազայի և գույքի ձեռքբերում Վերանորոգում և համապատասխան գույքի ձեռքբերում Համակարգի ձեռք բերում և տեղադրում	Ֆինանսական ոչ բավարար միջոցներ Ըստ հզորության
Հաստատության գործունեությունը կարգավորող իրավական ակտեր, դրանց վարումը	Ներդպրոցական վերահսկողության աշխատանքների կանոնակարգում, պլանի կազմում, վերահսկում	Կանոնակարգել և վերահսկել կատարվող ՆՎԴ –ի աշխատանքները	Ինֆորմացիայի պակաս ՆՎԴ-ի պլանի կազմման վերաբերյալ

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները	Կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ, ներգրավել ուսումնական գործընթացում Սերտ համագործակցություն և արդյունավետ գործունեություն կառավարման և խորհրդակցական մարմինների միջև(Կառավարման միացյալ, մանկավարժական, աշակերտական, հոգաբարձուների, ծնողական)	Ծնողների շահագրգռվածություն Անդամների պատրաստակամությունը և կազմակերպչական մոտեցումները	Ծնողների անտարբերություն Համագործակցելու պատրաստակամության բացակայություն
Աշակերտական համակազմը	Դպրոցի աշակերտների առաջադիմության և որակի բարձրացում Բարձր առաջադիմությամբ սովորողների թվաքանակի աճ Մասնագիտական կողմնորոշման ուղիների տրամադրում	Հրապուրիչ միջավայր և մրցակցային պայքար Խրախուսանքների և հոգեբանական աջակցության ապահովում Խորհրդատվական հանդիպումների կազմակերպում	Հեռանկարի բացակայություն Տվյալ խթանների բացակայություն և սովորողների տրամադրվածություն Սովորողների տրամադրվածություն

Մանկավարժական համակազմը	Նպաստել մանկավարժական աշխատողների զարգացմանը և ինքնակրթմանը,աջակցություն սկսնակ ուսուցիչներին Յուրաքանչյուր սովորողի նկատմամբ անհատական մանկավարժական աջակցության ցուցաբերում: ՏՀՏ գործիքներով աշխատելու կարողությունների բարելավում, Փորձի փոխանակման կազմակերպում	Մեթոդական նյութերի տրամադրում, խորհրդատվական սեմինարների, վերապատրաստումների կազմակերպում Մանկավարժների բարոյահոգեբանական մտածողության բարձրացում Կադրերի վերապատրաստում, փորձառու ուսուցիչների կողմից օրինակելի դասերի կազմակերպում, դասալսումների իրականացում	Ուսուցիչների շահագրգռվածության պակաս Մանկավարժների շահագրգռվածություն Մանկավարժների նախաձեռնության պակաս
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների , շահառու կազմակերպությունների հետ	Համագործակցություն կրթական, մշակութային, սպորտային հաստատությունների հետ	Կազմակերպել և անցկացնել արտադպրոցական միջոցառումներ	Հաստատությունների կողմից համագործակցելու ցանկությունների բացակայություն

Ուսումնական միջավայր	Նյութատեխնիկական բազայի համալրում Առողջ ապրելակերպ խմբակի ձևավորում և սպորտի խթանում Արտակարգ և տեղեկատվական իրավիճակների իրազեկում և վարժանքների կազմակերպում Խնդիր ունեցող սովորողների վկայագրում և մանկավարժահոգեբանական աջակցության տրամադրում	Ձեռք բերել ժամանակակից տեխնիկա և գույք Սպորտային մրցումների մասնակցություն ֆինանսական աջակցություն Համապատասխան ուղղեցույցների կիրառում Ծնող- դպրոց համագործակցություն	Անբավարար ֆինանսական միջոցներ Ֆինանսական միջոցների պակաս Պասիվ նախատրամադրվածություն Պատրաստակամության բացակայություն
Կրթության որակն՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Կրթության արդյունքների բարելավում, հմտությունների և կարողությունների զարգացում	Գիտելիքների և կարողությունների տրամադրում	Մեթոդների ոչ ճիշտ ընտրություն

Նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունների կատարողները, ժամանակացույցը և հնարավոր ֆինանսական ծախսերը

Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները	**կատարողներ**	**ժամանակացույց**	**Հնարավոր ֆինանսական ծախսը**
Միջանցքների, որոշ դասասենյակների , սանհանգույցի, սպորտդահլիճի, հանդիսությունների դահլիճի, հանդերձարանների, գրադարանի մասնակի վերանորոգում	Տնօրեն, համակարգող, խորհրդակցական մարմիններ	2023- 2028թթ	Ըստ նախագծային հաշվարկի
Ֆոտովոլտային արևային կայանի տեղադրում	Տնօրեն, համակարգող, վարչատնտեսական մարմիններ	2023-2025թթ	Ըստ հզորության
Գույքի և նյութատեխնիկական բազայի ձեռք բերում	Տնօրեն , համակարգող, խորհրդակցական մարմիններ	2023-2026թթ	Ըստ պահանջարկի
Ներդպրոցական վերահսկողական պլանի ստեղծում և կիրառում	Տնօրեն, ուս գծով տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ	2023-2024	Չի պահանջվում
Առողջ ապրելակերպ խմբակի ձևավորում և սպորտմրցումների մասնակցություն	Տնօրեն, ուս գծով տեղակալ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ	2023-2024	Ըստ ժամաքանակի

Խնդիր ունեցող երեխաների վկայագրում և մանկավարժահոգեբանական Աջակցություն, համապատասխան պայմանների ստեղծում	Տնօրեն, ուս գծով տեղակալ, դասղեկներ , խորհրդակցական մարմիններ	Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում	Չի պահանջվում
Մեթոդական նյութերի տրամադրում, խորհրդատվական սեմինարների, վերապատրաստումների կազմակերպում	Տնօրեն, վերապատրաստող կազմակերպություններ	Յուրաքանչյուր ուստարվա ընթացքում	Ըստ պահանջարկի
5- 12-րդ դասարաններում սննդի կազմակերպում	Տնօրեն	2023-2025թթ	Ըստ շահառուների թվի
Մասնագիտական կողմնորոշման իրազեկման սեմինարներ	Դասղեկներ, ԴԱԿ	Յուրաքանչյուր ուս տարվա ընթացքում	Չի պահանջվում
Փորձի փոխանակման և վարպետության դասեր փորձառու մանկավարժների կողմից	Տնօրեն, ուս գծով տեղակալ, մեթոդմիավորումներ	Յուրաքանչյուր ուս տարվա ընթացքում	Չի պահանջվում
Կրթության արդյունքների բարելավում, հմտությունների և կարողությունների զարգացում	Տնօրեն, ուս գծով տեղակալ, մեթոդմիավորումներ, մանկավարժական համակազմ	Յուրաքանչյուր ուս տարվա ընթացքում	Չի պահանջվում

Ծրագրի գնահատման չափանիշները, վերահսկողությունը

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատական գործընթաց է:

Համաձայն հանրակրթության մասին ՀՀ օրենքի դպրոցի զարգացման ծրագրի իրականացման վերահսկողությունը դպրոցի կառավարման խորհրդի գործառույթն է:

Դպրոցի ամենամյա աշխատանքային պլանը կազմվում է ըստ հնգամյա զարգացման ծրագրի:

Ծրագրում կատարված փոփոխությունները ներկայացվում են դպրոցի կառավարման խորհրդի հավանությանը:

Տարեկան աշխատանքային պլանով նախատեսված նպատակներն ու խնդիրներն սահմանվում են ըստ անելիքների առաջնահերթության:

Ծրագիրը մշտադիտարկվում և քննարկվում է մանկավարժական խորհրդի և ծնողական խորհրդի կողմից:

Ծրագրի իրատեսությունը և նրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները դրվում են խորհրդակցական մարմինների քննարկմանը:

Աշխատանքների իրականացման վերահսկողությունը իրականացվում է դպրոցի կառավարման, մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից:

Հաստատության հաշվետվությունները հասանելի են լինում հաստատության շահառուներին՝ պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, սովորողներ, համայնք:

Դպրոցի կայքէջը և Fasebook-յան էջը լիարժեք ծառայում են իբրև իրազեկման , համագործակցության և լուսաբանման հարթակներ:

<<Հանրակրթության մասին >> օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական: Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատման մասնակիցներն են՝ վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները:

Արտաքին գնահատումը իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների և կառույցների

կողմից:Անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ, տրվում լուծումներ:

Ակնկալվող արդյունքներ

1. Մրցունակ և որակյալ կրթական միջավայր
2. Վերանորոգված և արդի նյութատեխնիկական բազայով հագեցած առաջադեմ դպրոց
3. Հմուտ և նորարար մասնագետներ, փորձառու մանկավարժական համակազմ
4. Սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց
5. Ժողովրդավարական սկզբունքներին համապատասխան ԱԽ և ԾԽ գործունեություն
6. ՏՀՏ միջոցների լիարժեք ներդնում և կիրառում դասապրոցեսում
7. Աշակերտների թվի աճ, ԲՈՒՀ –եր ընդունվողների բարձր ցուցանիշ
8. Համայնքի առանձնահատկություններին և սովորողների նախասիրություններին համապատասխան միջավայր
9. Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն
10. Սովորողների ակտիվ ներգրավվածությունը առարկայական օլիմպիադաներում և մրցույթներում
11. 21-րդ դարի դինամիկ փոփոխություններին համարժեք կարողունակ քաղաքացի

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023_ 2028թթ դպրոցի զարգացման ծրագրում տեղ գտած բոլոր դրույթներն իրատեսական են, իրագործելի, վերջնարդյունքները՝ չափելի: Այն ապահովելու է անցած տարիներին կատարված աշխատանքների տրամաբանական շարունակությունը;